


ՀԻՄՆԱԿՈՐՈՒՄ

«ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԱՐԲԱՍ ԲՆԱԿԱԿԱՅՐԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ՆԱԽԱՏԵՍԱԿՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

Հաշվի առնելով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1918-Ն որոշման դրույթներով կազմված հողաշինարարական գործի նյութերով նախատեսվում է Գերմանական KFW բանկի ֆինանսավորմամբ իրականացնել «Համայնքային ենթակառուցվածքներ ծրագիր (ՀԵԾ) II Փուլ 3» ծրագրի շրջանակներում «SAFEGE SAS-ՋԻՆՋ ՍՊԸ» և SRP Schneider & Partner Lnginer Consult GmbH խորհրդատվական կազմակերպությունների կողմից պետք է կատարվի ՀՀ Սյունիքի մարզի Դարբաս բնակավայրում օրվա կարգավորման ջրամբարների (ՕԿՋ) կառուցապատման աշխատանքներ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրվա կարգավորման ջրամբարի կառուցման համար աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ է ՀՀ Սյունիքի մարզի Միսիանի համայնքի Դարբաս բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման 0.1200հա (կադաստրային ծածկագիր՝ 09-031-00030) փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր նպատակային նշանակության կոմունալ ենթակառուցվածքների հողեր գործառնական նշանակությամբ:

Քաղաքաշինության և տնտեսության
ոլորտը համակարգող բաժնի պետ՝

 Ս. Հովհաննիսյան


ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԱՐԲԱՍ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՅՈՒԹՅԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆԿԱՋԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի Դարբաս բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման 0.1200հա (կադաստրային ծածկագիր՝ 09-031-00030) փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր նպատակային նշանակության կոմունալ ենթակառուցվածքների հողեր գործառնական նշանակությամբ փոխադրելուն հավանություն տալու մասին Սիսիանի համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Սիսիանի համայնքի բյուջեում եկամուտների ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

Քաղաքաշինության և տնտեսության

նլորտը համակարգող բաժնի պետ՝

 Ս. Հովհաննիսյան